Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-534[1]-29.03.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2005 թվականի հուլիսի 8-ի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով.

«4) արտակարգ դրության ժամանակ՝ օրենքով սահմանված նպատակներով, դեպքերում, ծավալով և արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2005 թվականի հուլիսի 8-ի «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով.

«4) արտակարգ դրության ժամանակ՝ օրենքով սահմանված նպատակներով, դեպքերում, ծավալով և արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես~~մասն պահից~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացնումներ կատարելու մասին» և «էլեկտրոնային հաղորդակցության մասին» լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Աժ պատգամավոր Նազելի Բաղդասարյան	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացնումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «և ավարտը» բառերը	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Աժ պատգամավոր Սուրեն Գրիգորյան	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացնումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 2-րդ մասում «հիվանդի հետ» բառերը փոխարինել «նրանց հետ» բառերով	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
3.	Աժ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացնումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 2-րդ մասում հստակեցնել կարգավորումը՝ բժշկական գաղտնիք պարունակող տվյալները պարտադիր կերպով ստանալու մասով:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 6-րդ մասի հանել «ապանձնավորվում և են, իսկ անձնավորված տվյալները» բառերը և «անձնավորված» բառը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

5.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 7-րդ մասը հանել:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
6.	Աժ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան, Աժ պատգամավոր Նազելի Բաղդասարյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տվյալներ մշակողները և այն մարմինները, որոնց փոխանցվել են մշակվող տվյալները, ինչպես նաև այն երրորդ անձինք, որոնց բացահայտվել են սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա տրամադրված տվյալները, պարտավոր են պահպանել տվյալների գաղտնիությունը ինչպես արտակարգ դրության ընթացքում, այնպես էլ արտակարգ դրության ավարտից հետո:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 10-րդ մասից հանել **«չ**ապանձնավորելը և» բառերը:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 11-րդ մասում առաջին նախադասությունից հանել «օգտագործման և» բառերը, իսկ երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Այն անձինք, որոնց նկատմամբ արտակարգ դրության ընթացքում կիրառվել են ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներ, արտակարգ դրություն	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով պարտավոր են կիրառել էլեկտրոնային հաղորդակցության միջոցները կամ ենթարկվել արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումների կիրառման և դրանց պահպանման նկատմամբ հսկողության այլ միջոցների:»:		
9.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով լրացվող 9.1 հոդվածի 11-րդ մասում չորրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառման պարտադիր դեպքերում դրանք չկիրառելը համարվում է արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ռեժիմի խախտում:»:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: